


ԲԱԺՆԵԳԻՆ
 Ի Պուլկարիա
 Տարեկ. 10 ֆր
 Վեցամս. 5 ”
 —
 Արտասահման
 Տարեկ. 12 ֆր.
 Վեցամս. 6 ”
 Ամերիկա
 2 Տոլ. 30 սենդ
 ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏՄԱՆԲ
 Գրութիւնք եւ
 չեն տրուիր:
 —
 Հասցէ
 DIRAN
 PAPA ZIAN
 YILDIZ TABIA
 VABNA
 BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏՍԱԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Դ ՏԱՐԻ

— ՓԵ Բ. 10 ՇԱՐԱԹ 1901 —

ԹԻԻ 199

ԲԺԻՇԿ ԹԷ ԴԱՅԻՃ

Իցիւ թէ:

Այսպէս բացագանչած էինք այս էջերու մէջ յօդուած մը փակելու առթիւ, երբ ժողովուրդին ընտրական ուժին խղճամիտ կիրառման կոչում ըրած էինք հանրային գործերու լաւագոյն կառավարութեանը համար:

Ժամանակը շատ անցած չէ և հետեւեալը մեր ընթերցողներէն ոչ ոք մտացած է հարկաւ ողբը, զոր ողբացինք մեր կրթական անկանոն ու շատ վատ ուղղութեանը և ի մասնաւորի զայն վարողներու բացարձակ տգիտութեանը վրայ:

Ժողովուրդը հարցուց զարմանը և մենք սիրայօժար ցցուցինք զայն մեր խելքին ներածին չափ: Անոնց գործադրութեանը համար անդրադարձանք զարմաններու միակ աղբիւրին, այն է իրեն ուժին ու ասով մեր յարգելի հարցապընդողները դրինք նեղ, բայց, շատ հաճելի գրութեան մը մէջ: Ըսինք իրեն թէ «զարմանը դուն ես և միակ ուժը, որ ազդերու ճակատագրին վերայ կիշխէ հզօրապէս», քու մէջդ է»:

Ահաւասիկ ժամանակը եկաւ: Վաղը վարժաւորներու հոգաբարձութիւնը պիտի ընտրուի. նոր ի նորոյ պիտի լարուին մեր կրթական գործունէութեան զսպանակները ժողովուրդին կողմէ տրուած հասանքին համեմատ ու այդպէսով մեր ատ մեծ հիւանդը կամ պիտի վայելէ պէտք եղած հոգածու խնամքը և կամ ապիրատներու լուծին տակ նորէն պիտի չարչրկուի, նորէն պիտի տառապի, հինին պէս մարտիրոսութեան նոյնօրինակ սրտայոյղ տուամներ պարզելով մեր աչքին:

Վաղը մեր վարժարաններուն դռները պիտի բանանք ու հոն ստիպցէք, մեր ձեռքով մեր

ապագայ սերունդին ճակատագիրը պիտի յանձնենք հոգաբարձութիւն կոչուած մարմինին, որ բացարձակապէս տէրն է ատ սերունդին մտքին ու սրտին:

Պիտի ըսենք՝ հայերէն չը հասկցող լեզուատ ջարջին, «Գնա՛, քու արշիններուդ կտաւը չէ՛ ասիկա. մտքի անապատային պարագովը հռչակաւոր ցիցիլիցի լեզուագարին՝ «գնա՛, քու ուղղամտութենէ հեռի մոլորուած տուժարներուդ ցանկապատէն ներս չեն սղմիր վարժաւորանական սուրբ հաշիւները», վերջապէս՝ պիտի ըսե՛նք միմոսներուն, վաշխառուներուն ու սուս չեղող բոլոր իմաստակներուն, «գացէ՛ք, կորսուեցէ՛ք սրբութեան վայելէն, զոր երկար տարիներէ ի վեր պըղծեցիք ձեր գետինն անցնելիք տիրապետութիւնովը:

Բա՛ւ գոռացին՝ մեր կրթական սրբարաններու մէջ, պատուելիները իրենց «ընդ»երովն ու «յաղագս»ներովը. բա՛ւ ճղացին անոնց ետեւէն եկող իմաստակները իրենց պոռաւ ու զլուելի սփեստութիւնովը: Ու ասոնց հանդէպ, ջարջին՝ «օլան, էյի եափըբօրսունըդ», հաշիւնով բա՛ւ աղտոտեց մթնշուրաը սրբութեան տաճարին, ուր ծաղիկներ խամրեցան, կեանքեր փճացան աներեւակայելի մարտիրոսութեամբ. բա՛ւ վաշխառուն իր աղտոտ ձեռները խոթեց անոր սուրբ հաշիւներուն մէջ ու ամեն ինչ անօրինեց վաշխառուական կարգ ու սարքին համեմատ անպաման ետամուլութեամբ:

Ժամանակն է սթափելու և վռնտելու ատանկները մեր վարժարաններէն. մեր քուէները պէտք է հրժիռներու պէս այրեն ստոր ջարջիներու իշխանութեան խորարմատ շէնքը և անսր փլատակին տակ ծածկեն պատուելիին՝ ինչպէս նաև սփեստին տիրապետութիւնը ու բոլոր անոր զանգուածին խոշոր անշնորհքութիւնը:

Խնդիր է սակայն թէ ժողովուրդը՝ որին ափին մէջն է ահաւասիկ մեր սերունդին ազատումը, պիտի ունենայ ատ փրկարար սթափումը, պիտի կատրէ՝ շախշախէ՝ դժբաղդութեան օղակները, զոր ինչպէս առաջ մեզի համար դարբներ են ուրիշներ, նոյնպէս և մենք կը դարբներնք հիմա մեր ապագայ սերունդին համար. դեռ պիտի երկարէ՞ ասոնց շարքը դատապարտելի սառնութեամբ մը:

Վաղը վճռական օրն է ատոր: Հիւանդը շիտակէ շիտակ իր տիրոջ այսինքին ժողովուրդին ձեռքընէ, հիւանդապահի մը պիտի յանձնէ: Բժիշկ թէ դահիճ: Վաղը ժողովուրդը ինք պիտի վճռէ հէգ մանկութեան բաղդը, որ կամ պիտի օրհնէ զինք և կամ պիտի անիծէ խորունկ զարչանքով մը:

Շիտացած տղու պէս՝ ժողովուրդ, բաւական չէ ուրեմն, «սա կ'ուզեմ, նա կ'ուզեմ» ըսելով, մերթ ընդ մերթ ուժի պէս բան մը ցցնել հըրապարակի վրայ: Գիտակից ժողովուրդի մը յատուկ գործնական ոգիով տուէ՛ք ձեր քուէները անանկներու, որ ԲԺԻՇԿ ԸԱԼԵՆ ԲՈՒ ՀԻՒՆԻԻԻ ԵՒ ՈՉ ԹԱՀԻՃ:

Պիտի տեսնենք:
Բժիշկ թէ դահիճ:

ԹՕՏԻՈՒՆ

ԱՉԳԱՅԻՑ

Ազէքսանդրիայէն մնչ կը գրեն.

«Երէկ, կիրակի 27 յունվ. տեղի ունեցաւ Հայոց եկեղեցիին մէջ Վիկթորիա Թազուհիին հոգեհանդստի Պատարագը ու պաշտօնը: Եկեղեցին տմբողջ սեւերով ծածկուած էր: Մաքուր հագուած ոստիկաններ և ձիաւոր զինուորներ ի պատիւ եկած էին ոչ թէ կարգապահութեան, այլ սաղարանարի համար:

Անգլ. Ընդհ. ներկայացուցիչը, Գաղիական, Իտալական, Աւստրիական հրապատանները, Ազգ. ասնդրիոյ Ընդհ. կառավարիչը և զօրաց Անգլիացի հրամանատարը ներկայ էին: Նորընտիր առաջնորդ Յովսեփ Յպիս. Այվազեան սոյն հոգեհանգստեան պաշտօնը կատարելու համար երկու օր առաջ Գահիրէէն հոս հասած էր: Արարողութենէ վերջը Անգլ. ներկայացուցիչը դնաց Առաջնորդարան ուր 20 վայրկեանի չափ տեսակցեցաւ Առաջնորդ հօր հետ: Նորին վսեմութիւնը մեզ Հայոցս նկատմամբ շերմ համակրութիւն ցոյց տալով ըսաւ թէ. «Հանգուցեալ Թազուհի-

ին օրով այնչափ ազգեր տղտեցան, սակայն քաղաքական ինչ ինչ պատճառներ ուշացուցին ձեր ազատութիւնը. բայց յոյս ունինք որ եդուարդ է ի օրով. ձեր դարձն ալ կը կարգապարտի»:

ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Հինգշաբթի գիշեր ի նպատ Ազգ. վարժարանաց տրուած պարահանդէսը վայելուչ շքով կատարուեցաւ, սկիզբէն մինչև վերջը սրբերը շարունակեցին մեծ ոգևորութեամբ և կանոնաւորութեամբ: Կարգադիր մասնախումբը երկու մրցանակ օրոշած էր այն երկու դիմակաւորներուն որոնց հազուապէս եզական պիտի ըլլային: Առաջին մրցանակն ստացաւ ծաղկավաճառուհի Հայ օրիորդ մը, որուն շրջազգեստը մաքուր շովին ծաղիկներէ կազմուած էր և որ ձեռքն ունեցած կողովին մէջի ծաղկեփունջերը—մինչև իսկ իւր գլխարկին վրայի ծաղիկները— գովելի անձնութեամբ մը ծախեց հանդիսականաց և անկէ գոյացած 35 ֆրանքը նուիրեց Ազգ. երկսեռ վարժարանաց: Երկրորդ մրցանակը ստացաւ որտորդ մը, որ որտորդի մը համար պէտք եղածները մինչև իսկ պարկած Թարմ Թաշուհները պայուսակին մէջ կը կրէր: Ա մրցանակն էր բէնպէ ավլազի վրայ աքիլի բանուած բարձ մը, երկրորդն ալ հաշիւ—ասեղով և բլիւս կարնիւթիւր պրօտէ բանուած բարձ մը:

«Սասուն» զբօսարանի տէր և տնօրէն Տիար Յովհաննէս Յակոբեան և Սանդրալի տնօրէն Տ. Տիգրան Թիւֆէնկեան անձնուիրաբար աշխատեցան Պիւֆէին մէջ որ նոյնպէս ի հաշիւ վարժարանաց պատրաստուած էր: Սոյն երկու մասնապէսներու կարգադրութիւններէն ալ շատ գոհ մնացին հանդիսականք:

Թ.Ի. 25 ՏՈՄՍ

«ՍԱՆԸ ԳԼՏՈՐՈՒԵՐ Է, ԻՈՒՓԸ ԳՏԵՐ Է»

«Հայրենիք» շաբաթերթի 81 թուոյն մէջ Թիւֆէնկէն գրուած Հրանտ Թիրայր ստորագրութեամբ թղթակցութիւն մը ի մէջ այլոց կըսէ թէ Հայելի դադրած է հրատարակութենէ «Երկու խօսք հայ յեղափոխականներու» վերնագրով Փարիզէն զրկուած գրութիւն մը հրատարակելուն պատճառաւ. որ խրտչեցուցեր է եղեր մեր պա-

տասխանատուները, որոնք օտար ըլլալով հանգերձ, աւելի քան Հայելի նախանձախնդիր գրտուներ են մեր Ազգ. արժանապատուութեանը:

Ինչպէս ամեն մարդ գիտէ, Հայելի երբէք դադրած չէ հրատարակութենէ և հինգ տարիներէ ի վեր շարունակած է անխնայ ձողկել ուրիշ շատ մը մոլութիւններու հետ և խաչագողութիւնը, որ թուի թէ շիջեալն դպած է Հայրենիքի յայտնի ստախօս լիբր Փիրայրին ինքն ալ իր բաժինն առած ըլլալով այդ խարազանին հարուածէն: Այս պարագան այսինքն Հայելիի ԵՐԻՔԻ գաղթած չըլլալը լաւ գիտէր նաև Հայրենիքի իմբագրութիւնը, քանի որ իրարու հետ թերթ կը փոխանակէինք և այդ թղթակցութիւնը գրաշարին յանձնած ատեն ի հարկէ Հայելի իր գրասեղանին վրայ կը գտնուէր:

Փիրայր: անպատկառ ստախօս մը... իսկ գիտակցաբար ատ սուտին արձագանք եզոյթերթը...

«Սանը գլտորուեր է, խուփը գտեր է»

* * *

Ձայն Հայրենեացի Փետր. 2 և 67րդ թրւոյն մէջ կը կարդանք հետեւեալը.

«Հայրենիքի նախորդ (81) թուով Հին ցաւերը խորագրին տակ Ղաւթեան կարգ մը զառանցանքներով մինչև Հայոց պաշտելի Հայրիկին հասած էր, «Խայտասան կերպով ժողովուրդը խաբեց» ըսելով: Ասոր բացատրութիւնը պահանջեցին խուժը մը անձինք, Ղաւթեան պապանձեցաւ...»:

Ու ահա ապտակ մը ոչ երեսին, որուն ձայնը մինչև գուշը կը հասնէր. միւս կողմէն մէկը «Հայրենիք» թերթը ծաղած բերանը կը կոխէր, կլէ՛ ըսելով, ու վերայ կը հասնէր բոունց մը ըմբին ու ոչքին:

Հնչակեաններ խեղձ խմբագիրը փրկեցին, թեւորուն վրայ առած դուրս հանելով. (Գաշնակցականները... ծակը մտած էին): Գաւազանը Նէշուէ երեւցաւ, Ութը կոտրեցաւ...»:

Հայելի. — Լաւ է որ ասանկներ չափ դնեն իրենց լեզուագարութեանը և չը խաղան ազգին ամենէն սիրելի ու ամենէն պաշտելի անձնաւորութեանց պատուոյն հետ, որպիսին է Խրիմեան Հայրիկ:

ԵԶՍԿԱՆ ՊՈՐԱՍՐԱՀ ՄԸ

(Շար. եւ վերջ)

Սարսը ընկերութեան հայելին է, ըսած են, եւ ստուգիւ անոր մէջ կը պատկերանայ մեր ամեն գասակարգի շարժումները ու ձևերը, հետեւաբար զայն ունենալով պէտք է ունենանք նաև անոր պահանջած փափկանկատումները ու պատշաճի օրէնքները: Անցեալներս բարեկամներէս մին կըսէր թէ՛ երեկոյթի մը հրաւիրուեցայ, վճարելով մուտքիս գինը, զարմանով կը մնայի տեսնելով որ զիս այնչափ թախանձանօք հրաւիրող երեկոյթին ատէրը չէր ուզեր փոքրիկ սկնարկ մը իսկ դարձնել գրաս, անձկութիւնով մնացի երկար ատեն քունի որ չէի կրնար առաջին հանգիստդին հետ առանց նախնական ծանօթութեան երթալ պարել, բայց միութարուեցայ շիտակը երբ շուրջս գտայ իմ վիճակիս նմարկուած հայ երիտասարդներու խումբ մ'ալ. անշուշտ այս անձնութեան խոշոր բաժինը երեկոյթը սարքող պարոնին կիսնար. դժբաղդաբար իմ ըսելիքներս չը վերջանար այս չափով, չափազանցութիւն չեմ ըրած ըլլար. եթէ ըսեմ որ այդ երեկոյթը բաղնիքի խժարուր ժխորէն բնաւ տարբերութիւն մը չունէր, ոչ կարգ ոչ կանոն կար, ամեն մարդ իր բնահաճոյքին հասնեալ պար կը պահանջէր, արդեօք կանուխէն պատրաստուած որոշ յատակագիծ մը ունենալու չէր այդ երեկոյթը, շիտակը չը պիտի ուզեմ ըսել թէ՛ երեկոյթը կազմակերպող պարոնը սոմսափի սպասման հոգ տարածին պէս չէր սուած պէտք եղած խնամքը անոր փայլին ու կարգադրութեանը համար, պարզապէս շահագիտում մը, սոմսակները ծախուելէն վերջը ի՛նչ պէտք այլեւս անոր կարգապահութիւնը.

Շահագիտում ըսի, միտքս ինկաւ, անցեալ անգամ երբ հրաւիրուեցայ պարտաբաժնի պարծանօք կը գիտէի հայութեան նախնի փառքին «Ձինանչանք Հայաստանեացոյ պատկերը սրահին ճակատը, մինչդեռ այս անգամ երթալուս այդ պատկերը իր բացակայութեամբ կը փայլէր. հետաքրքրուեցայ ու իմացայ թէ տեղոյս թիւրք գեր-հիւպատոսին գրագիրը դիտողութիւն է ըրեր այդ պատկերին համար ըսելով թէ «եթէ չէր ուզէր զրկուիլ ինձ նման յաճախորդէ մը պէտք է վար առնէր այդ պատկերը», մտածեցի որ կրէ, անկէ վերկուիլ, զրկուիլ պիտի ըլլայ 5-10 ֆրանքներէն, ուստի այս անգամուան երեկոյթին չը կախեցի զայն:

Խիստ անձկութեամբ լսեցի բարեկամէս այս պատմութիւնը, որը արդարեւ պատճառ տուաւ ինձ երկարելու թերութիւններու շարքը. պիտի բաւականանայի նրամանօրինակ երեկոյթներու օգուտները ու կարեւորութիւնները չէշտելով անցնիլ ընթերցողն ալ գոհ տրամադրութեան մէջ ձգելով. բայց երբեմն կուզան պարագաներ որ ինչպէս կըսէ առածը, տան հաշիւը չը յարմարիր շուկայի հաշոյն: ԿՈՉՆԱԿ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Բարեկենդան.— Դիմակի կրկնապատկում:
Աւողջութիւն.— Արժէքը չճանչցուած հարստու-
թիւն:

Շուայութիւն.— Կարօտութեան նախակարապետը:
Ինքնասիրութիւն.— Եմ, ես, է:

Իր վիճակէն գոհ չեղողներ.— Ենք, էք, են:

Ամուսնութիւն.— Աճեցէք եւ բազմացարուք:

Ամուրիութիւն.— Քէնտի տէրտիմ քէնտիմէ եէ-
թէր:

Աղգականութիւն.— Գործը անձնական շահու վը-
րայ ըլլայ նէ այն ատեն կը հասկնաս:

Փորձառութիւն.— Խերն անիծուելէն ետքը:

Նախանձ.— Գեղեցիկ կին ունեցողներուն հարցուր:

Բարեկամութիւն.— Առևտուրի մէջ չըլլայ տէ, ին-
չի մէջ ըլլայ նէ ըլլայ:

Միքրոպ.— Աստուած անտեսանելի թշնամիներէն
ազատ պահեսցէ:

Պարզասիրութիւն.— Ազնիւ պճնասիրութիւն:

Ճշմարտախօսութիւն.— Շիտակը ըսեմ եղբայր,
Աստուած ալ գիտէ որ...

Կեդծաւորութիւն.— Շնորհաւոր բարեկենդան:

Անիրաւութիւն.— Գործիս չփաստէ, ուրիշին ինչ
ըլլայ նէ ըլլայ:

Բամբասանք.— Անձի մը տարրալուծումը:

Գովեստ.— Անձնական շահ կայ մի մէջը:

Գինեմոլ.— Աւսուանց գինիի տակառ մը, իրի-
կուան տակառ մը գինի:

Վսեմ.— Սիրահարական նամակներու մէջ փնտռէ:

Իր վիճակէն գոհ եղողներ.— Կեցիր փնտռեմ:

Անօթութիւն.— Մինչև որ կշտանայ:

Բարեւ.— Ձրի առեւտուր:

Քաջութիւն.— Վախկոտներու տեսականը:

Վախկոտութիւն.— Քաջերուն գործնականը:

Լէթցիկ

Գ. Ս.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԿԾԾԻ ՈՒ ՈՐԿՐԱՄՈԼ ԿՈՉՆԱԿԱՆԸ

Ակնայ քաղաքի Ապուշիս գիւղէն Եկէն ա-
զան՝ իւր հայրենակիցներէն Քարտուկենց Մալիւմ
աղային հարսանեաց նախընթաց օրը թաղ խոր-
հըրդոյ ատենապետին ներկայանալով սովորական
բարեւ տալէն ետքը կըսէ.

— Էֆէնտըմ, հրամանքնիդ վուր ասգային

գործերուն մէճճանէն կու նայիք. ծառայականս
ալ վաղիֆէի զիմմէթ սեպեցի ասդին վարտա-
թը շատցնելու հրմար թէքլիֆաթ մի անել.
մէսէլա, մեր հէմշէրիներէն Քարտուկենց Մալիւմ
աղան Ասվածային հրամանաւ վէ կանօնիւք Ս.
Հայրապետաց շաթուս տի կարգուի. վաղը թէ
ուր գան վէ մէլլիւսիդ միւրաճաաթ անին թեւ-
քերէ ուզին նէ՝ տանաթմիշ արէք, զէրէ կաթ
էլլայիք տամար է. իյճապը նայեցէք, վէ ալէլ-
խուսուս գվրատիւնին հրմար ալ թող քանի մին
կարմիր կլօրիկ էվէլ տան, ի՛նչ կու պակսի էֆէն-
տըմ, բարով չըլնիր մի ես:

— Շատ շնորհակալ ենք ձեր ազգասիրութե-
նէն Եկէն աղա, որ այս բանը ժամանակին իմաց
տուիք մեզի. մենք կը կարծէինք թէ ակնցինե-
րը քիչ մը կծծի կըլլան, իրաւոր դուք բացա-
ռութիւն կը կազմէք եղեր:

— Էֆէնտըմ, ատոնք աղէկ, լաքին տա բաց-
մացութիւն բան մին ուր ըսիր, ատի խապուլ
չիմ անիր, փառք Ասվածպետականին, սալը
ճէտիտին թէֆտէրներս եօխլամա մի արի, բաց
մաց չի կալլերնէն զատ գործերնիս քանի մը
փարայ առջևը կու նայի: Մենք եազըլս ուր միծ-
վի հիմայ Սթընպօլ ինք անցուցեր էօմրիւրնիս,
էկէր ուր շիպ շիտակ վէ տօղրուտան ասղրու
ֆէօս ուր գալած ըլլայանք իսէ՝ շատունց կա-
տունիս կապեր էանք, վէ պինաէն ալէյհ մեզի
հրմար 5-6 հազար կլօրիկը հիշ նշանակութիւն
չունի մեր քովը:

— Ներեցէք որ ես ալ ձեզի բան մը հարցը-
նեմ. կարծեմ հրամանքնիդ քանի մը զաւակներ
ունիք:

— Էֆէնտըմ, Ասվածպետականը ձերինները
ձեզի վէ մերիններն ալ մեզի պաղըլլամիշ անէ:

— Ամէն. բայց ինչո՞ւ ազգային վարժարանը
չէք խրկեր զանոնք:

— Օ՛հ, ատիկա զայրի մատտէ է. ծառա-
յականս հէր նէ խատէր ըսի քի 5-6 հազար
լիռան նշանակութիւն չունի մերին քովը, լաքին
մենք հիսապքեար մարդ իզք, իյնէտէն իբլիկը
հիսապ կու անինք. Ասվածպետականը էսամէյի
զավալ չի տայ. Էֆէնտըմ Աստուծոյ պարգեւա-
ծէն 4-5 զաւակ ունինք վէ մէյ մալ ճամբորդ
կայ. լաքին 2 տղան դվրատուն կու երթան. ատ
2ին 2ակուն ֆրանք մահիլէ տալու ըլլիմ իսէ՝
տարին 48 ֆրանք կու անէ վէ մէպլաղը մէպքիւ-
րով ալ 48 քիլօ քիշիյէն ֆասուլեա կու առնուի.
մէկ քիլօն 2 օր իտարէ ուր անինք նէ 96 օր կը-
նէ, որ ըսել է տարեկան պօղազ մէսարիֆիին
սիւլիւսը, անդին բորտաները պատիհալա կու
կարգացնեն վէ հէմ տէ էկէր էվրօբաէն ուռու-
պա ուր խրկին իսէ՝ մերիններուն ալ հէլպէթտէ
մէյմէկ բալթօ կուտան:

— Բայց երբ դուք զուգորդեցիք բողոքակա- նաց վարժարանը կը զրկէք. աղգ. վարժարանը ինչով պիտի հոգացուի, եթէ ամեն ունեւոր ձեզ նման հաշուագէտ ըլլայ. . . .

— Էֆէնտըմ, մենք մերին ձեռքէն եկածը կուտանք. ժամը մօմ կու վառինք, խանտիլը եաղ կու լեցնինք, վէ պաղէն ասանկ մուխպիրու- թիւն մ'ալ անինք իսէ՛ ասգն ալ կու շահի մենք ալ:

Ատենապետը համոզուելով որ աս կծծի մար դուն հետ չպիտի կրնայ գլուխ ելնել, — Ուրեմն ներեցէք, ստիպողական գործի մը պատճառա- պէտք է մեկնիմ ըսելով խորհրդարանէն կառնէ կը քալէ: Եկէն աղան ալ սոյն մուխպիրութիւնովը ազգին համար մեծ բարիք մը ըրած եղողի պէս սրտի գոհունակութեամբ իր գործին կերթայ:

* * *

Կիրակի իրիկուն, ուրիշ բարեկամաց նման մեր Եկէն աղան ալ ընտանեօք հրաւիրուած էր նոյն հարսնիքին, պսակէն ետքը ժամը 10ին շը- նորհաւորական այցելութիւն մը տալու. բայց սա ժամը 7ին կերթայ որպէս զի իրիկուն ճաշը հոն ընէ:

Եւ որովհետեւ հրաւիրելոց համար սեղան չը պիտի պատրաստուէր, ուստի տանուտէրք իրենք իրենց նստած մերթ երգելով ու մերթ կոնծե- լով կը զուարճանային: Եկէն աղան թէև օղիա- մօլ մը չէր, բայց երբ զայն պատիհալա գտնէր մինչև վերջը կը ճնկէր, ուստի օղիի ամսէին գը- լուխը անցաւ ու փորը կշտացունելու համար ըս- կըսաւ մեծ ջարդ մը տալ մեզէններուն, գործը յայտնի չընելու համար ալ կատակի ձևով միշտ կը հրամայէր օղիին շիշը լեցնելու ու «թագաւոր աղա, մէկ բարձի վրայ գլորիք» ըսելով կը ճնկէր ու կը թխէր:

Տան տէրը՝ այս որկրամոլին շահատակու- թեանցը վերջ տալու մտօք առաջարկեց որ օղի- ին ամսէն վերցնեն ու քիչ մ'ալ պարեն: Եկէն աղան անոր մէջ ալ մտաւ, ու իսիսիսն զօրու- թեամբը համարձակութիւն առնելով սկսաւ օ- թորդներն ու տիկինները անկաժէ ընել, երբեմն անքաղաքավարութեամբ թեւերնէն քաշելով: Խնայողութեան համար կօշիկին տակը գամել տուած խոշոր գլխով գամերը յաճախ իր պարա- կիցներուն ոտքի մատները կը ճմլէին, որոնք ճզելով և վշտանալով կը հեռանային:

Վերջապէս երբ պարը լնացաւ, մեր որկրա- մօլը համարձակեցաւ փետին ըսել:

— Էֆէնտըմ, թագաւոր աղա, մէկ բարձի վրայ գլորիք, ութամա բազար, միխէի պօ- զար, մենք անօթի եինք. հարսնիք վուր եկանք, տի խմենք, ուտինք ու խնդանք. ձեր շանին

ձեր շէօհրէթին կու ձգինք. պագգալին խանու- թը՝ տի երթանք ուտինք:

Ասոր վրայ տանտէրը ճարահատեալ կակող երես կոչնականը քաթոյ (մառան) կիջեցնէ ու առջևը կը դնէ խոշոր պնակ մը. . . . Մասուշեսս քիյազի, որ մեզէի համար պատրաստուած էր, և զոր ամբողջովին կը լսփէ մեր կծծի ու որկրա- մօլ Եկէն աղան:

ԿԱՅԵԼԻ

ՄԵԼՔՈՆ ԱՂԱՅԻՆ ԲՕԼՔԱՆ

Տեսարանը կը ներկայացնէ՝ տան մը ընդար- ձակ սրահը, ուր հաւաքուած են երկսեռ բարե- կամք և աղագականք՝ Մելքոն աղային անուան տարեգարձը շնորհաւորելու համար:

Սրահին մէջտեղը դրուած թալիսին վրայ կ'երևան օղիի և գինիի շիշեր, շրջապատեալ մըր- գեղէններով ու 5—10 տեսակ համադամ աղան- գեղէններով:

Բազմոցին մէկ անկիւնը հպարտօրէն նըս- տած է ջութակահար միւսիւ մը, որ շիտակը խօ- սելու համար աւելի գլխացաւ քան թէ հաճայք պատճառելու պաշտօնն ունի իր կաթսայի տակի խաչքնիքը յականութիւններովը:

Ժամը 10ն է, ներկայք, ըստ սովորութեան, անուշով եւ սուրճով պատուասիրուած են:

Չութակահար պարոնին իբր կեցիկնի հա- նած եզիկնիական ճըղըթըներուն, կըյիւրյներուն ու կղիկղիներուն մէջ Մելքոն աղան յանկարծ ոտքի ելնելով տնեցի օրիորդ մը կանչելէ ետքը ըսաւ. . .

— Միսի, բօլքա մի տի զարնիս մեզի ուր՝ մենք ալ մինակնիս ցատկուտինք:

Ասոր վրայ սկսաւ Չութակահարը զարնել գիտ- ցած այն միակ բօլքան, որ հինգ երկար տարի- ներու խաղընթըյական աշխատութեամբ հաղի- կարողացեր է սորվիլ:

Մելքոն աղային մինակը պարել ուղելուն պատճառը սա էր որ, աջ ձեռքը մատներուն անցուցած լայն մատանիները, քէհրիպար համ- րիչը ու կուրծքին վրայ հիւսիսէն դէպի հարաւ երկնցուցած սակի խաբլամա գորտոնը հանդիսա- տեսներուն . . . աչքը խօթէ:

Այսպէս մէկ քառորդ ժամ օրսա քօջալ աջ ու ձախ երերալէ վերջը, (որովհետև բօլքա չը գիտէր) յոգնած տաման ձգելով ուրիշ օրիորդի մը հետ ալ սկսաւ երծրտկալ:

Ներկայք անսնելով որ ոյս եզական բօլքան

անվերջենալի է : ու զոնէ կէս-բերան իրենց ալ «հրամմեցէք, խաղացէք» ըսող մը չը գտնուիր, ինքնաբերաբար ոտք ելան ու ձեռք ձեռքի տալով «եկուր ծեծենք սոխնի: սխտոր, կանանչ կեխտոր չըխմանանանենք» խաղը սկսան երգել, միևնոյն ժամանակ փորով, քիթով, յատակով, ճակատով, արմուկով, գլխով ու ոտքով սկսան ծեծել այն անհատնում սխտորը՝ որուն պատճառաւ գետնէն ելած փոշին ու հոտերը հանդիսականաց քիթն ի վեր կը բուրէին և ընդհանուրին բռնքալ կը պատճառէին :

Նոյն միջոցին տարիքոտ կանանց դասուն մէջ կը լուին հետեւեալ խօսքերը .

—Քուրուկ, արթըխ օյին չի գտան, քիթով տիպով սխտոր ծեծել ելան :

—Կուղեն նէ բերնով ծեծեն, ամա թօղ չի հանեն . թըխ նէֆէս կըլլանք կոր :

—Գիտես քի՞ արատա հեղ մը ձռած վախթերնին անկաճիս պաշխա ծանծր կուգան կոր :

—Ես ատիկա չեմ իմանար կոր ամա, պազի պազի կծու հոտ մը կառնեմ կոր :

—Սխտորին հոտը ըլլալու է .
—Սխտորնուն ալ նանլէթ հոտերնուն ալ :

Չմոռնանք ըսել թէ այս ժխտրին մէջ խաղընրոյին ձայնը պաթալ եզած էր, ու միւսին քէմանը մէկ կողմ ձգած՝ սեղանին վրայ գլուխուած գաւսայիժը ու հնդկահաւի սէօյիւշը անխօսուկ ազատնա կընէր իր փորը :

Այսպէս մինչև վերջը քանի մը անգամներ սխտորական հոռան քաշելով՝ փորերնին, քիթերնին, յատակնին, ճակատնին ու գլուխնին ուռեցընելէ ու ստամոքսնին ալ ըմպելիքով ու աղանդեղէններով բեռնաւորելէ ետքը, «կրակի թուլումպա» մըն ալ վերցնելով մնաք բարով ըսին ու ելան գացին :

* * *

Մեւքոն ալան որ եզական բոլքայի մը, այսինքն մատնիններն ու գօրտօնը ցուցնելու եսամոլութեամբ հարսնիքի մը կերուխումին չափ բաւական ծախքեր ըրած էր, եթէ օր մը իրեն գիմում ըլլուի և ի նպաստ որբերու քանի մը ֆրանք ուղուի, արգեօք ի՞նչ կը պատասխանէ .

Ս .

Բոժ . — «Ի՞նչնտրմ, ախպուրիթա չի կայ, տէսթ տէսթի վրայ նստած հով կու կուլինք .» ըսելով իրեն գիմողը կը ճախրէ :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ .)

Քամչաթքա

Վարժարանի լեզուէ հասկցող հոգաբարձութիւն մը ընտրելու համար 20-30 զարգացեալ ազգայինք ի ժողով գումարուելով 45 անձանց ընտրելաց ցանկ մը պատրաստեցին, ու մինչև հիմա ապարդիւն պաշտօնավարողները ժողովուրդին մատնանիչ ընելու համար՝ անոնց անուններուն քակր զի՛ծ քաշելու որոշումը տուին :

Թատերասրահ

Սանդրալի կարօնները Վարդանանցի իրիկունը հոն հաւաքուած հայ ժողովուրդը պատուասիրեցին գաւաթ մը յէջնէին շուրջ 10 փարայի անոնց ծախելով :

Պարասրահ

Սանդրալի թատերաբեմին վրայ Վարդան Մամիկոնեան և Յաղկերտ իրենց հաշիւը կարգադրելէ վերջը՝ բարեկամաբար թե թեի մտած պտոյտ մը ըրին . . . Ազգ . պարահանդէսի սրահին մէջ : Անոնց հետեւեցան Հայկ նահապետ, Շապուհ, Մուշկան Նիւսալաուրտ, Պօէրնէր, Թըրանսվալ, Թոնքինի Պոքէրնէրը և այլք իրենց հակայ հասակներովը :

Երանելին Հայկ նահապետ խոր ծերութեանը պատճառաւ միշտ երկու ձեռքերը ետին կապած կորաքամակ կը պտտէր և նստած ժամանակը շատ կը մտածէր : Իսկ եթէ սխալմամբ երեսը բանար, . . . գուրայի քանիչուն կը յիշեցնէր :

Նոյն ժամը 6

Պարահանդէսը վերջացաւ Շամբանեայի չի-չի մը ստակալի պայթումովը, որուն ձայնէն բոլոր հանդիսականք թիպ մը վեր ցատկեցին :

Մատրիտ

Հարսնիքի մը մէջ կարգ մը պօղազավերներ՝ սպասաւորները աշխատութենէ մը ազատեցին, լափած պաղլավաներնուն պնակներն անգամ . . . լղելով :

Թոնքին

Վարպետ տուտուի խամրոցին կէճէլիքի դաստիարակը (?) անուան տօնախմբութիւններու պատելով, սկսած է . . . չաղորձիտրիս ընել : Անցեալ իրիկուն 7 ժամ չալելուն փոխարէն ըստացաւ 2 ֆրանք ու տանտիրոջ հետեւեալ յարգանաց բանին արժանացաւ .

«Հախըգ հէլալ արէ մընչուկ» :

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ»Ի (6)

ՌԸՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԽԻՐ-ՄԱՄՈՒԿԸ)



Սա անշուշտ զգաց անոր գալը : վասն զի ստուգիկ սարսուռ մը համակեց իր բոլոր էութիւնը, և երբ ազնետալի մարդը ձեռքն իրեն կարկասեց, աղջիկը ոտքի ելաւ աշխուժով, անոր հպման աղտեղութենէն աղատ մնալու յոյսով :

Մարդն իր անանական ծամածուծովը ժպտեցաւ և հրամայեց անոր իրեն հետեւիլ :

Խեղձն հնազանդեցաւ անոր քովէն բաշխուողով, և այսպէս անցան նախ այն տանջանարանէն զոր վերը նկարագրեցինք, յետոյ երկար ու ամայի գետնուղիէ մը, որ առաջնորդեց զանոնք բանտին՝ կիներու յատկացուած բաժինը :

Հինգ վայրկեան ետքը, առջի օրոտան հարսը իր ետիէն կը լսէր ծանր դրան գոցուիլը : Խեղձ Սօլ-Պրոտէ նորէն առանձին էր իր անձկութիւններուն հետ, բաժնուած մօրմէն, բարեկամներէն, բոլոր անոնցմէ որք պիտի կրնային պաշտպանել զինքը :

Այն՝ որուն կեանքը, քսանըջորս ժամ առաջ, կը բացուէր այնքան լի անուշ խոստումներով, այլ ևս իրեն իբրև հորիզոն ունէր անձուկ բանտի մը խոնաւ պատերը, և իբրև ապագայ, եղբունագատ ատեանն ու իր զարհուրելի դատավճիռը :

Հիմակ քայլ մը ետ դառնանք ըսելու համար թէ պարագաներու ի՛նչ աղետալի շղթայումով մը տասնէ հինգ տարեկան կոյս մը այսպէս ամեն ուրախութիւններէն փոխանցուած էր վիշտերու :



Ե .

Մանկամարդ աղջկան փրփիջ

Գրեթէ առտուան ժամը ութն էր, ու թէև տակաւին փետրուար ամսուն վերջն ըլլար, արշալոյսը՝ քանդոնի նահանգին մէջ կը խոստամար մին այն գեղեցիկ ու գաղջ օրերէն՝ որք երկնից օրհնակ երկիրներէն մէկը կընեն Չինաստանի հարաւակողմը :

Արեւը պիտի երթար փնտռէր վամբօտի վայելչաձեւ մեհանը հսկայ արմաւենիներուն մէջտեղ որք կը շրջապատէին վայն իրինց խորախորհուրդ ստուերներովը. իր առաջին ճառագայթներովը կ'օսկեզօժէր՝ քանդակեալ յարձապակիէ տասը տանիքները, և պղինձէ ծնծղաները, երկար գեղին պարեգօտներ հագած կրօնաւորներու հարուածներուն տակ հնչելով, առաւօտեան աղօթքին կը հըրաւիրէին հաւատացեալները :

Մարգարիտներու գետը, որուն եղերքները թաղուած էին թանձր մշուշի, որուն վերևը մօտակայ բլուրները կ'երևային ծածանուտ կղզիներու պէս, կը լեցուէր հազարաւոր զանազան մակոյիներով, ամենէն թեթեւէն մինչև ամենէն ծանրը, և արծաթագօծ ջուրերը կը ցօլացնէին անոնց անհեթեթ ձեւերը և ծամածուծ գեմքերով առաջոյթները :

Բրինձի արտերը աչքդ առածին չափ կը տարածէին իրենց զմրուխտի շարժէն գորգերը, ուսկից խոյս կուտար : նաւագներուն երգերէն արթննալով, թեւաւոր ամբոխ մը գեղգեղուն և խօսուն, և ախմին, — վասն զի ասիկա թուշուն մըն է որ Միջին Ասյարութեան մէջ պահպանն է հաւնոցներու, — եղէգներու վերևը կը բարձրացունէր իր խելացի գլուխը՝ հսկելու համար բաղբրուն վրայ որք իրեն յանձնուած էին և զոր Պօքթաթիկրիսի բերդերուն թնդանթները, օտար նաւու մը ժամանումն ողջունելով, կը սարսափեցնէին զանոնք իրենց յաշարգական պայթիւններովը :

Ցամաքին վրայ ալ բնակիչները կարթննային, զըւարթ և բազմազբապ : Ի մէջ այլոց, Ֆուլն-Սի փոքր քաղաքը, գետին աջ ափին վրայ հաստատուած, հակառակ առաւօտեան ժամուն, ամենէն նկարչագեղ տեսարանը կընծայէր :

Պաթէօն-տ'Օն փողոցին մէջ մանաւանդ ամբոխն աղմկայոյզ էր և ոգեւորուած :

Ջրկիրները, մինչև մէջքերնին մերկ, իրենց ծանր բեռը կը տանէին ուսին վրայ հաւասարակշիռ երկար պամպուլի մը ծայրերը, և ճամբոյ կը բանային իրենց խղզուկ աղաղակ մը արձակելով :

Սափրիչները կը տեղաւորուէին իրենց դուռներուն առջև, փողոցին համար վիճաբանելով բացօթեայ բժիշկներու, բախտագուշակներու, բուրդ գզողներու և կերպաս փաթթողներու հետ :

Գրամափոխները կը պատրաստէին իրենց փղփղե փոքր կշռոցները՝ ձոյլերը կշռելու համար :

Խանութիւնները կը կենային իրենց գոններու սեմին վրայ, եռանդով : հմայիչ աչքով եւ խոստմնալից կողերով կուռելու պատրաստ՝ որպէս զի իրենք բաղն յաճախորդները :

Ամբոխին մէջ կային նաև երկար սպիտակ հողա-
թափներ հագած կրօնաւորներ որք՝ գանդաղ ու լուրջ
քաղաւածքով՝ Ֆօի մեհեանը կ'երթային, յետոյ յանկարծ
ամբոխին սեղմ կարգերը կը բացուէին ոստիկանութեան
մանտարէնին յառաջընթացներուն առջև որոնք խարա-
զանի հարուածներով կը հեռացնէին հետաքրքիրները :

Աերջապէս ուտելեաց վաճառականները կը զարգա-
րէին իրենց պարենները՝ հոն, նարինջի եւ պանանի լեռ-
ներ, աւելի հեռուն լատրոն կղզիներուն եւ Պէնկալի
ծովածոցի շանաձուկերու թեւեր, հոս, ջուրի մուկերու
կարկանդակներ ոսկեգոյն կեղեւով. բոլը, եփած փոքր
շուններու շարքեր, որկրամոլներու սեղանին համար :

Այս խանութներէ մէկուն առաջոյքին վրայ կը
տեսնուէր՝ բազուկները մերկ եւ ամենատարօրինակ եր-
եւոյթով բարձրահասակ մարդ մը, թէ՛ իր դէմքին ընդ-
անուր արտայայութենէն եւ թէ իր այլանդակ զինուած-
բէն :

Ասիկա Չուն էր, մսավաճառը : Իր երկար ոսկրուտ
բազուկներն ու անվերջանալի սրունքները՝ ծայրայեղ նի-
հարութեամբ, կարծես փակցուած էին թանձր ու կարծ
պնդակազմ իրանի մը, հսկայ կմախքի մը անդամները հաստ
կոճղի մը փակած :

Ասկից զատ, իր կարմիր երեսը լուսաւորուած էր
երկու խոշոր աչքերով՝ ճակտին վերեւը, եւ իր շուրթե-
րը յաւիտենական հեգնոտ ժպիտով մը ծամածուէ-
ին :

Բոլոր այս կոշտ ու կոպիտ ամբողջութիւնը կը կազ-
մէր ուրախութիւնն ու սոսկումն ալ թաղին ստամբակնե-
րուն եւ այն խոհարարութիւններուն որք Չուի խանութը կը
յաճախէին :

Կարմիր-Մամուկ մականուած էին զայն : Ասան զի
երբ իր արիւնաներկ բազուկներն երկարէր կտոր մը միս
առնելու համար, աւելի հրեշային մամուկի մը կը նման-
էր իր որսին վրայ յարձկող, բռն պարկեշտ մսավաճա-
ռի մը՝ իր յաճախորդներուն ծառայող :

Բայց Պաթէոն—տ'Օռ փողոցին մսավաճառը չէր սրտ-
մտէր իրեն տրուած այդ մականունէն. առաջ ինք կը
խնդար, ցուցնելով երկու շարք ճերմակ ակոսներ որք դի-
շակերի մը նախանձը շարժելու աստիճան սուր էին, եւ
էրբ զնդանի յաճախորդու հիի մը հեա գործ ունենար,
ինչ որ շատ անգամ կը պատահէր, իր խանութը բալու-
քին ամենէն շատ յաճախորդ ունեցողներէն ըլլալով,
անոր կատակախօսութիւններուն կը պատասխանէր բաց
եւ համարձակ խօսքով մը :

Ասան զի Չու կնամեծար, էր, կուզէր հաճելի ե-
րեւնալ եւ քիչ մըն ալ պարասիրութիւն ունէր :

Ամեն տասն օրն անգամ մը ճակատը կածիլէր,
ինչպէս կը պահանջէր սովորութիւնը, սեւ մագերուն
հիւսքը գլխուն բոլորտիքը կը պլորէր աշխատութեան
ժամերուն միայն : Գործը լմնցունելուն պէս, այդ հիւս-
քը կը զարգարէր մեաաքսէ ժապաւէնով մը եւ պերճո-
րէն կը ձգեր զայն իր երկար ողնայարին վրայ : Աերջա-
պէս ինքզինքն յորգող ամեն շինացիի պէս, երբէք բայլ
մը չէր հեռանար խանութէն առանց իր ծխափայտին,
իր հովանոցին ու հովահարին :

Խանութը գոցելէն ետք մեր մարդուն վայելած
հաճոյքներն էին թղթախաղ կամ թեյատան մը մէջ ա-
փիոնի ծխափայտ մը, եւ տրամադիբական ներկայացում-
ները զորս քանդոնի թատերախումբը ատեն ատեն կու-
տար պամպուէ թատրոնին վրայ, զոր հանդիսական կարգ
մը պարագաներու աթիւ, կը կանգնէին Ֆուս—Սիի մեծ
հրապարակին մէջտեղ :

Ինչպէս կը տեսնուի, Չու՝ գրեթէ ուրիշներու նը-
ման վաճառական մըն էր, եւ օրովհետեւ կեղծ կշիռ
չէր գործածեր, աղէկ տեսակ միս կը ծախէր եւ երբէք
ողբատէ մը չէր խնայեր գաւաթ մը թէյ, ոչ ալ սա-
բէք մը, ուստի պատիւ կը վայելէր :

Հակառակ իր տարօրինակ երեւոյթին եւ բարբա-
րիկ կերպարանքին, բուական ալ աղնուասիրտ մարդ կը
նկատուէր :

(Շարունակելի)

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ
ՆՈՐ ԲԱՌԳԻՐԲ
Պատկերազարդ
ՖՐԱՆՍԱՀԱՅ
ՓԱՐԻՉ
1900

Սոյն ընդարձակ բառգիրքը, որուն առաջին հա-
տորը, 1061 մեծագիր երեսներէ բաղկացած և բազ-
մաթիւ պատկերներով զարդարուած, հրապարակ ելած
է, կը պարունակէ Ա—Է գիրերը :

Պուլկարիոյ և Ռուժանիոյ մէջ գնել փափաքողները
պէտք է դիմեն Վառնա «Հայելի» խմբագրութեան :
Նոյնպէս կարելի է ուղղակի դիմել հեղինակին,
հետևեալ հասցեով

108 Ապրնիս սթ Նեոյի
Նեոյի սիւռ Սէն

(Ֆրանս)

Ամէն մէկ հատրի գինն է 25 Փրանք :

Печатница „Взаимность“ — Варна